ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԲԱՐՁՐԱՇԽԱՐՀԻԿ ԿԱՀՈՒՅՔԸ

Բագրատ Գյուլխասյան
ԵԳՊԱ ասպիրանտ

Ժամանակակից մարդու կենցաղավարման, կեցության և կենսամակարդակի որակի ուղղակի ցուցանիշներից ու գրավականներից մեկը հարմարավետ բնակելի տարածությունն է և դրա անմիջական բաղկացուցիչ կահույքը: Հնուց ի վեր կահ-կարասին ունեցել է ամենատարբեր գործառույթներ ու սիմվոլիկ-կոնցեպտուալ բազմապիսի նշանակություն: Կահույքի տարրական պարագաների ծագումն ու կիրառությունը սկիզբնավորվել է դեռևս նախապատմական ժամանակներից, երբ քոչվորությունից անցում կատարվեց նստակյացության, իսկ կահույքի լայն տարածումն ու գործածությունը սկսվում է դասակարգային հասարակության և քաղաքային կյանքի ձևավորման շրջանից[1]:

Կահույքը պատկերացում է տալիս տիրոջ սոցիա-լական դիրքի, ճաշակի և աշխարհընկալման մասին: Մ.թ.ա III հազ. եգիպտական դամբարաններում հայտնաբերված կահույքի մասերը, թերևս, մեզ հասած ճոխ, մշակված ու իշխողի դերն ու դիրքը շեշտող գործառույթն իրենց վրա կրող վաղագույն նմուշներն են: Մարդկության պատմության զարգացմանը զուգահեռ, քաղաքակրթություններն իրարից ժառանգում էին բնակելի տարածքի հարդարման ատրիբուտների ձևեր ու գաղափարներ՝ սինթեզելով նորանոր ոճեր, տենդենցներ և հարմարավետության ու գեղեցկության յուրօրինակ համադրումներ:

Հայոց կենցաղը նույնպես խիստ հետաքրքրական վերաբերմունք է ունեցել կահ-կարասիի և բնակարանի ինտերիերի այլ բաղկացուցիչների հանդեպ:[2] Հայկական լեռնաշխարհում կահույքի հնագույն նմուշներից հայտնի է Խորխոռոյան արհեստական քարայրներից մեկում փորված քարե նստարանը: Հայաստանում կահույքի ամենահին հայտնագործությունները վերաբերում են ուշ բրոնզի շրջանին: Դրանք գտնվել են Լճաշենի դամբարաններից և համարվում են թաղման մահիճներ: Այդ մեծ ուղղանկյուն թախտերը կլոր ոտքեր ունեն և հյուսված կաշե փոկերով նստատեղեր (1,2-1,5 մ, 0,6-0,8 մ): Նմանատիպ թախտեր հայտնի են նաև Ցամաքաբերդի, Արթիկի, Ռեդկին լագերի դամբարաններից: Ռեդկին

---

[1] Г. Гацура, *Мебельные стили*, М, 2008, стр.4.

[2] Հ.Տ. Մարության, *Հայ ժողովրդական բնակարանի ներսույթը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ)*, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Հ. 17, ՀԽՍՀ ԳԱԱ, Երեւան, 1989, էջ 94.

լագերից գտնված մահճի կարճ ոտքերը քառակուսի են (բարձր. 20 սմ, երկ. 1, 23 մ, լայն. 60 սմ)։ Օշականի վաղ երկաթի շրջանի դամբարանից (№ 78) հայտնաբերված բազկաթոռի ձևն այլ է, ցածր ոտքերը վերևում քառակուսի են, դեպի ներքև կլորանում և հաստանում են (55/77 սմ)։ Նստատեղին ցանցաձև գործած կաշեփոկից է եղել։ Ուշագրավ այս բազկաթոռը նույնպես համարվում է թաղման մահիճ։

Անտիկ Հայաստանի կահույքագործությունը գրավոր աղբյուրների և հնագիտական պեղումների տրամադրած նյութերի հաշվին որոշակիորեն ուսումնասիրված բնագավառ է։ Թեև գրավոր աղբյուրները վկայում են քաղաքային բնակչության կողմից օգտագործվող, ինչպես նաեւ՝ արքունիքի և վերնախավի ճաշակին համապատասխան պատրաստված գեղարվեստական կահույքի լայն արտադրության մասին՝ սեղաններ, աթոռներ և հատկապես շքեղ բազկաթոռներ, «բազմականներ» կամ «բազմակալներ», որոնց վրա դրվում էին գեղարվեստորեն ասեղնագործված «բարձերը», բայց դրանց տեսքն ու կառուցվածքը, ցավոք, մեզ հայտնի չէ։ Ուստի, այս առումով իբրև աղբյուր են հանդես գալիս հնագիտական նյութերը։ Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արտաշատից, Երևանից և Սիսիանի իշխանական դամբարանից հայտնաբերված կահույքի մանրամասները։ Արտաշատի I բլրից հայտնաբերված կահույքի մնացորդները բարդ ձևավորում ունեցող ոտքերի մանրամասներ են՝ կենտրոնական անցքով, տարբեր տրամագծերով օղակներ։ Դրանք պատրաստված են հաստոցի վրա, գտնվել են մ.թ.ա. II-I դդ. շերտից։

Սիսիանի իշխանական դամբարանից (մ.թ.ա. I դար) հայտնաբերված կահույքի մնացորդներն ավելի բազմատեսակ են։ Պատրաստված են բրոնզից՝ մաս առ մաս ձուլելու եղանակով և լավ փայլեցված են։ Այնուհետև, առանձին մասերը հավաքել են երկաթյա կենտրոնական ձողի վրա, իսկ նրանց միջև մնացած դատարկ տարածությունը՝ լցրել հատուկ շաղախով։ Երկաթյա ձողերը, միացնող դեր կատարելուց բացի, ոտքերին հաղորդել են ամրություն։ Ժամանակի ընթացքում երկաթյա ձողերը ժանգոտվել են և բրոնզյա մասերի ճաքելու և փչանալու պատճառ դարձել։ Վերակազմությունը ցույց է տալիս, որ դրանք ունեն տարբեր տրամագծեր։ Ընդհանուր առմամբ, նկատելի է ոտքերի սիլուետների աստիճանական նեղացում, որոնք կտրուկ անցումներով, երբեմն սահունորեն նեղանում են, երբեմն էլ ուռուցիկ ձևեր ընդունում զանգակների, օղակների, հորիզոնական առևակոսների տեսքով՝ ստեղծելով լուսաստվերի հարուստ խաղ։ Ոտքերն իրար

հետ ամրացվել են Π-ձև բրոնզե լայնակի ձողերով, որոնք հարդարված են ակոսավոր զարդերով:[3]

Երևանից հայտնաբերված կահույքի ոտքերի, ուռուցիկ մասերի տրամագծերը քիչ ավելի են և նույնպես ունեն նման բարդ ձևավորում: Սիսիանից հայտնաբերված կահույքի մյուս մասերը համեմատաբար փոքր տրամագծեր ունեն: Դրանք փայտե ձևավոր միջուկի վրա փաթաթած բրոնզե թիթեղներ են, որոնց վրա պահպանվել են մեխերի անցքերը: Մեզ են հասել նաև փայտյա միջուկի առանձին հատվածներ, որոնք պատրաստված են հաստոցի վրա: Վերջիններս, ամենայն հավանականությամբ, բազմոցի (թախտի, մահճի) և բազկաթոռի առջև դրվող ցածր աթոռի ոտքեր են:

Հայկական հնագույն կահույքի արտաքին տեսքի վերաբերյալ պատկերացում են տալիս Արտաշատից, Գառնիից և Արմավիրից հայտնաբերված կավե արձանիկները, որոնց վրա պատկերված են նման և այլ տիպի բարդ ձևավոր ոտքերով թախտեր, բազկաթոռներ և ցածր աթոռներ: Այդ տեսակետից ուշագրավ են մոր ու մանկան կավե արձանիկները, որտեղ կինը նստած է ձևավոր ոտքերով բարձր բազկաթոռին, կնոջ ոտքերի տակ դրված ցածր աթոռը նույնպես ձևավոր ոտքեր ունի: Որոշ օրինակների վրա աթոռակ կա նաև կնոջ ձախ կողքին կանգնած երեխայի ոտքերի տակ (նկ. 1):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում բարձր թախտին նստած մոր ու մանկան արձանիկը, կիսապառկած տղամարդու, իսկ երբեմն նաև՝ թախտի կողքին ցածր աթոռին կանգնած երեխայի հետ միասին: Թախտերն ունեն ձևավոր հաստ ոտքեր, որոնք վերևից ներքև նույն լայնության են: Հորիզոնական ակոսներով ոտքերի կենտրոնական լայն գոտին հարդարված է ծաղկաշղթայաձև զարդերով: Թախտին նստած և կիսապառկած տղամարդու պատկերով Արտաշատից, Գառնիից հայտնաբերված մի այլ խմբի կավե արձանիկների վրա թախտի ոտքերը ձևավոր են, բայց առանց կենտրոնական գոտու ծաղկաշղթայաձև զարդի:[4] Այսպիսով, Արտաշատից, Սիսիանի իշխանական դամբարանից և Երևանից հայտնաբերված կահույքի մնացորդները թախտի, բազկաթոռի, բարձր աթոռի և նրանց առջև դրվող ցածր աթոռակի մանրամասներ են: Ինչպես հայտնի է, կավե արձանիկների վրա պատկերված են աստվածներ և աստվածացված

---

[3] Ժ.Դ. Խաչատրյան, «Կահույքագործությունը Հայաստանում (մ. թ. ա. II-մ. թ. II դդ.)», *Պատմա-բանասիրական հանդես*, 1992, № 2-3, էջ 160-174:

[4] Ժ. Դ. Խաչատրյան, «Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1977, № 1, էջ 37-60:

հերոսներ, ուստի կասկածից վեր է, որ վերոհիշյալ գտածոները նույնպես վերնախավի կողմից օգտագործվող, հանդիսավոր, շքեղ կահույքի մանրամասներ են:[5]

Հայաստանից հայտնի են նաև այլ տիպի շքեղ կահույքի մանրամասներ. դրանք բրոնզե երկու քանդակ են, որոնք պատահաբար հայտնաբերվել են Մրենում և հանդիսանում են փայտե մահճակալի գլխատեղի ձախ կողմի երեսապատման թիթեղի մասերը: Քանդակներից մեկն իր ձևով ներքևի մասի մեդալիոն է, որտեղ պատկերված է թևավոր կնոջ հարթաքանդակի կիսանդրի (բարձր, 8.7 սմ, լայն. 6.9 սմ): Մյուսը, ծավալային լուծմամբ, եղել է գլխատեղիի վերին մասում եւ ներկայացնում է շան գլուխ ու վիզ: Երկու քանդակներն էլ ներսից դատարկ են և ձուլված են կաղապարի մեջ, այսպես կոչված մոմե մոդելի «կորսայան» եղանակով, որից հետո որոշ մանրամասներ ենթարկվել են լրացուցիչ մշակման (թևերը, աչքերը, ականջները, բաշը, բուրդը և այլն):

Այսպիսով ռելիեֆ քանդակներով զարդերը կիրառական արվեստում լայն տարածում են ստացել հելլենիստական շրջանում, երբ կահույքը հաճախ էր հարդարվում այդ եղանակով: Մահիճը, որին պատկանում է Մրենի բրոնզե հարդարանքի մասը, հելլենիստական շրջանի արտադրանք է, որ մի շարք փոփոխություններ կրելով՝ զոյատևել է մինչև մ. թ. II-III դարեր: Այդպիսի մահիճներ հայտնաբերվել են Արայուխովյան կուրգանից, Պրիենայից, Պելլայից և այլ վայրերից, որոնք կապող օղակ են հունական և հունահռոմեական՝ մ.թ.ա. I - մ.թ. I դդ. մահիճների միջև: Վերջիններս վերին մասում ավարտվում էին կենդանիների (ձիու, առյուծի, շան, թռչնի և այլն) գլուխներով, ինչպես Մրենինը: Ենթադրվում է, որ Մրենի մահճի կիսանդրին պատկերում է Արտեմիս-Հեկատեին, այն պատրաստված է Հայաստանի արևմտյան քաղաքներից մեկում ապրող վարպետի կողմից և պատկանում է մ. թ. II դարի երկրորդ կեսին:[6]

Փոքր Ասիան, Միլեթը և Քիոսը V-IV դդ. եղել են մահճի պատրաստման հայտնի կենտրոններ, սակայն ավելի ուշ շրջանի մահիճներ համեմատաբար քիչ են հայտնի:

Դատելով ըստ Հայաստանից հայտնաբերված վերոհիշյալ կահույքի բրոնզե մասերի (Սիսիան), ինչպես նաև կավե արձանիկների վրայի պատկերների՝ Հայաստանին բնորոշ են եղել թախտերը, որոնք հատուկ պատրաստված գլխատեղ չունեն, դրանց փոխարեն օգտագործվել են ճոխ բարձեր: Ակնհայտ է սակայն, որ Մրենից հայտնաբերված մահիճը, չնայած տեղական արտադրութ-

[5] Ժ.Դ. Խաչատրյան, «Կահույքագործությունը Հայաստանում»., էջ 162

[6] Նույն տեղում:

յուն է, այդուհանդերձ, ամբողջությամբ աղերսվում է փոքրասիական մահիճներին:

Անտիկ շրջանում կահույքը պատրաստվում էր փայտից, քարից, մետաղից ու ոսկուց: Վերջինները կրկնում էին փայտյա կահույքի ձևերը: Քարե կահույքը հանդիսավոր բնույթ ուներ եւ տեղադրվում էր հասարակական շենքերում ու հարուստների տներում: Ճիշտ է, VII-IV դդ. Մերձավոր Արևելքում, Հունաստանում և Էտրուրիայում կահույքի մեջ օգտագործում էին մետաղյա զարդեր, սակայն մետաղյա մասերի ու զարդերի կիրառումը լայն տարածում ստացավ միայն հելլենիստական շրջանում: Իսկ ուշհելլենիստական շրջանից արդեն սկսվում է մետաղյա կահույքի արտադրությունը, որի վառ ապացույցն է նաև Հայաստանից հայտնաբերված վորհիշյալ կահույքը:

Ուրարտական շրջանի կահույքին վերաբերող նյութերն ավելի առատ են: Կարմիր բլուրում գտնվել են վառված փայտե աթոռների մնացորդներ, որոնց միայն վերին մասի և կենտրոնականի բրոնզե հատվածներն են մեզ հասել: Խոշոր, շքեղ գահի բրոնզե, ոսկեզօծ, կենդանակերպ և այլ տիպի քանդակներով հարդարված ոտքեր են հայտնաբերվել Թոփրախ կալեից, Կայալի Դերեից և այլ հնավայրերից: Գերմանական արշավախումբը Թոփրախ-կալեից հայտնաբերել է գահի՝ առյուծ-ցուլի քանդակով, տերևապսակ նախշերով ոտք: Էրմիտաժում պահվում են ցլի վրա կանգնած աստծո, թևավոր ցուլերի ու առյուծների քանդակներով, մարդկային գլխով (դեմքը՝ սպիտակ քարից, աչքերը՝ ընդելուզված), իսկ Բրիտանական թանգարանում՝ եզան քանդակներով գահերի մասեր (նկ. 2 և 3):

Կարմիր բլուրից և ուրարտական այլ հնավայրերից գտնվել են նստարանների և եռոտանիների՝ ցուլի ոտքի կամ առյուծի թաթի նմանությամբ ոտքեր: Մուսասիրի տաճարի արձանագրության մեջ հիշատակվում է, որ Իշպուինի թագավորի գահը եղել է բրոնզաձույլ, իսկ Թոփրախ–կալեից գտնված մեդալիոնի վրա պատկերված է գահի վրա բազմած կին: Ուրարտական բազկաթոռների (գահերի) մասին պատկերացում են տալիս նաև Թոփրախ կալեից հայտնաբերված ոսկե մեդալիոնը և արծաթյա լուսնաձև կրծքազարդը, ինչպես նաև Կարմիր բլուրից գտնված արծաթյա մեդալիոնը, որոնց վրա պատկերված տեսարաններում աստվածուհին նստած է գահին: Այդպիսի շքեղ գահավորակներ պատկերված են նաև ասորեստանյան հուշարձանների վրա, որտեղ նույնպես նստածները թագավորներ են կամ աստվածներ:

Ուշագրավ է, որ Սարգոնի պալատի պատին պատկերված Մուսասիրի տաճարի թալանի տեսարանում պատվանդանի ոտքերն աստիճանաբար բարա-

կում են և ունեն հորիզոնական շրջանաձև օղակներ: Սարգոն II-ի՝ Աշուր աստծուն գրած նամակում, խոսելով Մուսասիրից վերցրած ավարի մասին (14 թ.), նշվում է նաև փղոսկրե մահճակալի, ոսկով և քարերով հարդարված արծաթե մահճի, 10 սեղանի ու սև բազկաթոռի մասին:

Վաղ հայկական շրջանից կահույքի գտածոներ մեզ հայտնի չեն, սակայն կահույքի մասին տեղեկություն հաղորդում է Քսենոփոնը իր *Անաբասիսում*: Նա վկայում է, որ երբ հույները գրավեցին Տիրիբադոսի վրանը, նրա մեջ այլ իրերի թվում ավար վերցրեցին նաև արծաթե ոտքերով մահիճներ և ըմպանակներ: Նշված մահիճները (թախտեր), ամենայն հավանականությամբ, ունեցել են աքեմենյան կահույքի ձևեր, հարդարված են եղել նույն եղանակով:[7]

Եթե գահն ու բազկաթոռը հիմնականում հանդիսավոր-պաշտոնական ընդունելությունների համար էին նախատեսված, ապա թախտը (մահիճը) կահույքի ամենաանհրաժեշտ տեսակներից մեկն էր: Սիսիանում գտնված թախտը, ճիշտ է, բավականին շքեղ տեսք ունի, սակայն կավե արձանիկների մի խմբի վրա պատկերված թախտն ավելի շքեղ է, նրա ոտքերի կենտրոնական գոտին հարդարված է ծաղկեշղթայաձև զարդով: Թախտը տարածված էր Հին Արևելքում, Հունաստանում, Իտալիայում և այլուր: Այն ոչ միայն շքեղ կահույք էր, այլև օգտագործվում էր հանգստանալու, քնելու, ճաշելու համար եւ խնջույքների ժամանակ (ինչպես կարելի է ենթադրել Արտաշատի կավե արձանիկներից մեկի պատկերից, որտեղ կիսապառկած տղամարդու ձեռքին *կանթարոս* կա): Հույները հանգուցյալին տնից մինչև գերեզման տանում էին մահճի կամ դիակառքի վրա և դրանով էլ թաղում: Լճաշենի, Արթիկի, Ցամաքաբերդի, Ռեդկին լագերի և Օշականի թաղման ձևերից դատելով՝ կարելի է ենթադրել, որ այդ սովորությունը եղել է նաև Հայաստանում: Սիսիանի դամբարանում դիակիզումից հետո մոխիրը լցրել են կավե դագաղի մեջ և դրել թախտին:

Թախտն Արևելքում օգտագործվում էր նաև պետական կարևոր որոշումներ ընդունելիս՝ վրան կիսապառկած վիճակում[8]: Ինչպես վկայում են գրավոր աղբյուրները և ինչպես երևում է Հայաստանում հայտնաբերված վերոհիշյալ կավե արձանիկների վրայի պատկերներից՝ թախտին կիսապառկած դիրքով մնալու համար եղել են շքեղ, գեղարվեստորեն ձևավորված հատուկ բարձեր: Հայաստանում գահավորակի և թախտի առջև, ոտքերի տակ դրվող ցածր աթոռակներն օգտագործվել են դեռևս ուրարատական շրջանում: Հետագայում դրանք

---

[7] Քսենոփոն, *Անաբասիս*, Գիրք IV, Երեւան 1970, էջ 72:

[8] Г. А. Пугаченкова, «Трон Митрндата I из парфянской Нисы», *Вестник Древней Истории*, 1960, № 1, с. 161-171, рис. 1-9.

լայնորեն տարածվել են ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ անտիկ աշխարհում:[9]

Թեև ուրարտական շրջանի և մ.թ.ա. II դարի Հայաստանի կահույքն իրար հետ կապող փաստական նյութեր չկան, սակայն կասկածից վեր է, որ նախորդ շրջանի ավանդույթները շարունակվել են: Դա նշանակում է, որ կահույքագործությունը և նրա հետ կապված արհեստները գտնվում էին զարգացման բարձր մակարդակի վրա: Վերը նշված բարդ ձևավոր ոտքերով (Սիսիան, Երևան), գլխատեղի երեսապատման քանդակազարդ մասեր ունեցող (Մրեն) կամ աղբյուրներում հիշատակված արծաթե կամ ոսկեջրած կահույքի արտադրությանը, բացի հյուսնից, մասնակցում էին մետաղագործության, հատկապես՝ գեղարվեստական մետաղի տարբեր բնագավառների արհեստավորներ:

Հայոց քաղաքներից Արտաշատը, լինելով առևտրական և արհեստագործական խոշոր կենտրոն, եղել է նաեւ կահույքագործության, շքեղ կահույք արտադրող հիմնական վայրերից մեկը: Այդ մասին է վկայում կահույքի բարդ, ձևավոր ոտքեր ձուլելու՝ գիպսե երկփեղկանի կաղապարի մի փեղկը (պահպանված մասի երկ. 25 սմ, զանգակաձև ուռուցիկ մասի տրամագիծը՝ 10 սմ): Այն գտնվել է Արտաշատի VIII բլրի առաջին շինարարական շրջանի շերտից (մ. թ.ա 180-ական թթ. - մ.թ. 58թ):[10]

Անտիկ շրջանի այդպիսի կաղապար այլ երկրներից մեզ հայտնի չէ: Կաղապարի գյուտը խոսում է Հայաստանում գեղարվեստական բրոնզ ձուլելու բարձր մակարդակի մասին, որը մ.թ.ա. I - մ.թ. I դարերում ուներ արվեստի այդ բնագավառում ստեղծած իր ավանդույթները, Հայաստանի անտիկ շրջանի հուշարձաններից և մասնավորապես՝ Արտաշատից ու Սիսիանից հայտնաբերվել են գեղարվեստական մետաղի բարձրարվեստ նմուշներ, հալոցներ, տարբեր տիպի զարդեր ձուլելու կաղապարներ ե այլն:

Հայաստանի բարձրաշխարհիկ կահույքն իր ձևերով, հարդարանքով, ոճական առանձնահատկություններով ու պատրաստման եղանակով չի զիջում անտիկ աշխարհի մյուս երկրներից հայտնի կահույքին: Զարգանալով հինարևելյան ընդհանուր միջավայրում, շարունակելով հանդերձ տեղական ավանդական ձևերն ու հարդարանքը՝ այն շատ ընդհանրություններ ունի մյուս երկրների կահույքի հետ, որն առևտրատնտեսական ու մշակութային սերտ կապերի արդյունք է: Դա խոսում է նաև Հայաստանում փայտամշակության և դրա հետ կապված արհեստների զարգացման բարձր մակարդակի, ինչպես նաև բոլոր արտադրամիջոցների,

---

[9] Ժ.Դ. Խաչատրյան, *Կահույքագործությունը Հայաստանում*.., էջ 164

[10] Նույն տեղում:

գործիքների առկայության մասին, որ գործածում էին հելլենիստական և հռոմեական կայսրության մեջ մտնող երկրների փայտամշակությամբ զբաղվող արհեստավորները:

Պատմաքաղաքական իրավիճակների հաճախակի փոփոխությունները, քաղաքային միջավայրի ու կեցության անընդմեջ վերափոխումներն ու ժամանակավոր դադարներն ուղղակի ազդեցություն էին ունենում նաև իշխանական-բարձրաշխարհիկ կահույքի ստեղծման ու օգտագործման վրա: Ժողովրդական կիրառական և հասարակ կարասին, այդուհանդերձ, միշտ պահպանում էր իր կարևորագույն առաքելությունը՝ կիրառականություն, հարմարավետություն և մատչելիություն:

Հայկական անտիկ կահույքագործության շքեղ դրսևորումներն ու դարավոր ավանդույթներն այսօր, ցավոք, կորսված են. հայոց ժամանակակից հարուստ մենատների ինտերիերի այս կարևորագույն միջավայրաստեղծ երևույթը մեծապես ներկրվում է եվրոպական կամ մերձավորարեւելյան երկրներից, իսկ տեղում պատրաստվող կահույքը կամ կրկնօրինակում է վերջիններիս, կամ եթե նույնիսկ ունի ինքնուրույն դիզայներական լուծումներ, գրեթե ճնշող մեծամասնությամբ ոչ մի կերպ չի ներառում հայոց կահույքագործության բազմադարյան ավանդույթը և չի փորձում արդիականացնել այն: Մինչդեռ այն կարող է հարուստ նյութ մատակարարել ու ներշնչանքի աղբյուր հանդիսանալ թե՛ ոճական տեսակետից, թե՛ առանձին մանրամասների առումով:

Ամփոփում

ANCIENT ARMENIAN SECULAR FURNITURE

Bagrat Gyulkhasyan
YAFA PhD student

Furniture is an integral part of any living quarter. It always emphasized social status and the taste of the owner. History of furniture goes deep into centuries showing the development of cultural and social life of different nations and civilizations. Armenian secular furniture is very interesting. It appears to us mainly by several artifacts found during archaeological excavations in the ancient Armenian cities and by means of historical evidences. Ancient Armenian furniture is known from the Late Bronze Age, from Urartu and the Hellenistic period. Armenian furniture was evolved under the influence of oriental ancient cultures, partly borrowed traditions, forms and aesthetics.

ДРЕВНЕЙШАЯ АРМЯНСКАЯ СВЕТСКАЯ МЕБЕЛЬ

Баграт Гюлхасян
Аспирант ЕГАХ

Мебель является неотъемлемой частью любого жилого помещения. Она всегда подчеркивала социальный статус и вкус хозяина. История мебели уходит в глубь веков, показывает развитие культурной и светской жизни разных народов и цивилизаций. Очень интересна армянская светская мебель, которая представляется нам главным образом некоторыми артефактами, найденными во время археологических раскопок в древнейших армянских городах и посредствам исторических свидетельств. Древнейшая мебель из Армении известна от поздней бронзы, из Урарту и эллинистического периода. Армянская мебель развивалась под влиянием восточных древних культур, отчасти заимствовав традиции, формы и эстетику.

Պատկերները վերցված են Երեբունի հնագիտական թանգարան-արգելոցի և Բրիտանական թանգարանի տեսադարանների



Նկար 1. Մոր և մանկան կավե արձանիկ, Արմավիր

Նկար 2. Կահույքի բրոնզե մանրամասն Թոփրախ Կալեից, Բրիտանական թանգարան:

Նկար 3. Կահույքի բրոնզե մանրամասն Թոփրախ Կալեից, Բրիտանական թանգարան: